# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 319-Ա

**ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 22.08.2022Թ. N 293-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

Ալավերդի համայնքի ղեկավարի 22.08.2022թ. «Ինքնակամ կառուցված բնակելի գործառնական նշանակության նկուղով ավտոտնակի նկատմամբ Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը ճանաչելու, օրինականացնելու, փոստային հասցե տրամադրելու մասին» 293-Ա որոշման 2-րդ կետում «2022BGFWND»-ի փոխարեն կարդալ. «2022BQFWND»:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2022թ. սեպտեմբերի 26

ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 320-Ա

### ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 22.08.2022Թ. N 298-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

Ալավերդի համայնքի ղեկավարի 22.08.2022թ. «Ինքնակամ կառուցված բնակելի գործառնական նշանակության ավտոտնակի նկատմամբ Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը ճանաչելու, օրինականացնելու, փոստային հասցե տրամադրելու մասին» N 298–Ա որոշման մեջ 6-րդ կետից հետո լրացնել.

7. «Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Խուդյակով փողոց, 102 հասցեում գտնվող, 0.002984 հա մակերեսով, 06-002-0028-0231 ծածկագրով բնակավայրերի հասարակական կառուցապատման նշանակության հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել որպես բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության:
8. Օրենքով սահմանված կարգով փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո այն ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում:»

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2022թ. սեպտեմբերի 26
ք. Ալավերդի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 321-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ՆԿՈՒՂՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ, 35-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության 19.11.2019թ. 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշումով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 22.08.2022թ N 297-Ա որոշումը, սեփականության իրավունքի N 19092022-06-0029 վկայականը, վճարման անդորրագրերը և հաշվի առնելով, որ Գուրգեն Հովիկի Պարանյանն ընդունել է նկուղով ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը, վճարել է օրինականացման համար սահմանված վճարները, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, Պղնձագործների փողոց, 45 ավտոտնակ հասցեում գտնվող, համայնքի ղեկավարի 22.08.2022թ N 297-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 78.4 քմ արտաքին մակերեսով (68.8 քմ ներքին մակերեսով) նկուղով ավտոտնակը՝ 80595 (ութսուն հազար հինգ հարյուր իննսունհինգ) դրամ արժեքով և սպասարկման համար զբաղեցրած 0.00465 հա մակերեսով հողամասը՝ 36828 (երեսունվեց հազար ութ հարյուր քսանութ) դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, օտարել Գուրգեն Հովիկի Պարանյանին:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ավտոտնակի և զբաղեցրած հողամասի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2022թ. սեպտեմբերի 26
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

26 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 322-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ, 35-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության 19.11.2019թ. 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշումով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 22.08.2022թ N 296-Ա որոշումը, սեփականության իրավունքի N 19092022-06-0057 վկայականը, վճարման անդորրագրերը և հաշվի առնելով, որ Գուրգեն Հովիկի Պարանյանն ընդունել է ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամաս ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը, վճարել է օրինականացման համար սահմանված վճարները, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, Օսիպյան փողոց, 15 ավտոտնակ հասցեում գտնվող, համայնքի ղեկավարի 22.08.2022թ N 296-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 31.6 քմ արտաքին մակերեսով (25.1 քմ ներքին մակերեսով) ավտոտնակը՝ 32485 (երեսուներկու հազար չորս հարյուր ութսունհինգ) դրամ արժեքով և սպասարկման համար զբաղեցրած 0.00316 հա մակերեսով հողամասը՝ 25027 (քսանհինգ հազար քսանյոթ) դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, օտարել Գուրգեն Հովիկի Պարանյանին:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ավտոտնակի և զբաղեցրած հողամասի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2022թ. սեպտեմբերի 26
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 323-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԵՆՅԱԿՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ, 35-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության 19.11.2019թ. 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշումով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 28.07.2022թ N 256-Ա, 10.08.2022թ. N 283-Ա որոշումները, սեփականության իրավունքի N 22092022-06-0092 վկայականը, վճարման անդորրագրերը և հաշվի առնելով, որ Վահան Վոլոդյայի Վերանյանն ընդունել է տնտեսական սենյակով ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը, վճարել է օրինականացման համար սահմանված վճարները, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Երիտասարդական փողոց, 9/10 ավտոտնակ հասցեում գտնվող, համայնքի ղեկավարի 28.07.2022թ N 256-Ա, 10.08.2022թ. N 283-Ա որոշումներով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 129.6 քմ արտաքին մակերեսով (114.3 քմ ներքին մակերեսով) տնտեսական սենյակով ավտոտնակը՝ 184291 (հարյուր ութսունչորս հազար երկու հարյուր իննսունմեկ) դրամ արժեքով և սպասարկման համար զբաղեցրած 0.00669 հա մակերեսով հողամասը՝ 125585 (հարյուր քսանհինգ հազար հինգ հարյուր ութսունհինգ) դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, օտարել Վահան Վոլոդյայի Վերանյանին:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում տնտեսական սենյակով ավտոտնակի և զբաղեցրած հողամասի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2022թ. սեպտեմբերի 26
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

27 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 324-Ա

### ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 8-13-րդ կետերով և հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված բնակելի տունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում է քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով Վրույր Գևորգի Էվոյանի դիմումը, անձնագրի պատճենը, սեփականության իրավունքի N 10112021-06-0077 վկայականը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ» ՍՊ ընկերության կողմից տրված կադաստրի կոմիտեում ինքնակամ կառույցի հաշվառման տեղեկանքն ու կազմված հողամասի և շինության հատակագծերը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Օրինականացնել Ալավերդի քաղաքի Սանահին թաղամաս, 2-րդ փողոց, 18/2 հասցեում գտնվող՝ Վրույր Գևորգի Էվոյանին (ծնված՝ 14.10.1966թ.) սեփականության իրավունքով պատկանող, 0.044152 հա, 0.00422 հա մակերեսներով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում 2016թ. ինքնակամ կառուցված, կադաստրի կոմիտեում 2022B7UYDA ծածկագրով հաշվառված, 197.4 քմ արտաքին մակերեսով (152.66 քմ ներքին մակերեսով) բնակելի տունը:
2. Օրինականացված բնակելի տան համար սահմանված՝ 202927 (երկու հարյուր երկու հազար ինը հարյուր քսանյոթ) դրամ արժեքով վճարը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
4. Նշված իրավունքը ենթակա է պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2022թ. սեպտեմբերի 27
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 325-Ա

### ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՄԱՍՆ (ԱՍՏԻՃԱՆԱՀԱՐԹԱԿՈՎ) ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 8-13-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված բնակելի տան մասը (աստիճանահարթակով) չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում է քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով Պարույր Մովսեսի Կոստանդյանի դիմումը, անձնագրի պատճենը, ժառանգության իրավունքի վկայագիրը, սեփականության իրավունքի N 1374829 վկայականը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊ ընկերության կողմից տրված կադաստրի կոմիտեում ինքնակամ կառույցի հաշվառման տեղեկանքն ու հողամասի և շինության հատակագծերը, «Թիվ 1 ԲԾՏ» ՓԲԸ տնօրենի կողմից 29.07.2022թ. տրված N 0-50 տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը **որոշում եմ՝**

1. Լոռու մարզի Ալավերդի քաղաքի Էնգելսի փողոցում գտնվող բնակելի տանը տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Էնգելս թաղամաս, 97 բնակելի տուն փոստային հասցե:
2. Օրինականացնել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Էնգելս թաղամաս, 97 հասցեում գտնվող, Պարույր Մովսեսի Կոստանդյանին ժառանգության իրավունքով պատկանող, 0.054 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասում 2017թ. ինքնակամ կառուցված, կադաստրի կոմիտեում 2022MXMG2Y

ծածկագրով հաշվարված, 31.65 քմ արտաքին մակերեսով (29.2 քմ ներքին մակերեսով) բնակելի տան մասը (աստիճանահարթակով)։

3. Օրինականացված աստիճանահարթակով բնակելի տան մասի համար սահմանված ընդհանուր՝ 38265 (երեսունութ հազար երկու հարյուր վաթսունհինգ) դրամ արժեքով վճարը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած։
4. Հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում։
5. Նշված իրավունքը ենթակա է պետական գրանցման։

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2022թ. սեպտեմբերի 27

ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

27 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 326-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԵՆՅԱԿՈՎ, ԲԱՑ ՊԱՏՇԳԱՄԲՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ, 35-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության 19.11.2019թ. 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշումով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 08.09.2022թ N 316-Ա, որոշումը, սեփականության իրավունքի N 26092022-06-0032 վկայականը, վճարման անդորրագրերը և հաշվի առնելով, որ Գոհար Բաբաջանյանն ընդունել է տնտեսական սենյակով, բաց պատշգամբով ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը, վճարել է օրինականացման համար սահմանված վճարները, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, Օհիպյան փողոց, 41 ավտոտնակ հասցեում գտնվող, համայնքի ղեկավարի 08.09.2022թ N 316-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 78.2 քմ արտաքին մակերեսով (70.9 քմ ներքին մակերեսով) տնտեսական սենյակով, բաց պատշգամբով ավտոտնակը՝ 80390 (ութսուն հազար երեք հարյուր իննսուն) դրամ արժեքով և սպասարկման համար զբաղեցրած 0.00391 հա մակերեսով հողամասը՝ 30967 (երեսուն հազար ինը հարյուր վաթսունյոթ) դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, օտարել Գոհար Բաբաջանյանին:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում տնտեսական սենյակով բաց պատշգամբով ավտոտնակի և զբաղեցրած հողամասի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2022թ. սեպտեմբերի 27
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 327-Ն

### ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԵՋ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ի ն և 3-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով ***որոշում եմ՝***

1. Ալավերդի համայնքի 2022 թվականի բյուջեի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

   Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ բնագավառում նախատեսված օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում բաժնի (բաժին 01, խումբ 1, դաս 1, ծրագիր 51, h/h 900262161038) 4-րդ եռամսյակում նախատեսված ծախսերից 84.6 հազ. դրամը տեղափոխել 3-րդ եռամսյակ՝ հոդված 4212, նույն բաժնում՝ 4221 հոդվածում, նախատեսված ծախսերից 84.6 հազ. դրամ 3-րդ եռամսյակից տեղափոխել 4-րդ եռամսյակ, ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) բաժնի (բաժին 01, խումբ 6, դաս 1, ծրագիր 51, h/h 900262121057) 4-րդ եռամսյակում նախատեսված ծախսերից 4.0 հազ. դրամը տեղափոխել 3-րդ եռամսյակ՝ հոդված 4212, նույն բաժնում՝ 4241 հոդվածում, նախատեսված ծախսերից 4.0 հազ. դրամ 3-րդ եռամսյակից տեղափոխել 4-րդ եռամսյակ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2022թ. սեպտեմբերի 27
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 328-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Գագիկ Սուրենի Երիցյանի կողմից լիազորված անձ՝ Արթուր Գագիկի Երիցյանի դիմումը, լիազորագիրը, սեփականության իրավունքի N 1222204 վկայականը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

Գագիկ Սուրենի Երիցյանին սեփականության իրավունքով պատկանող, Ալավերդի քաղաքի Սանահին թաղամասում գտնվող տնամերձին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին թաղամաս, 2-րդ փողոց, 4-րդ նրբանցք, 4/2 հողամաս փոստային հասցե:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2022թ. սեպտեմբերի 27
ք. Ալավերդի